

Արձանագրություն №16/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2020թ. հունիսի 26-ին տեղի ունեցած թիվ 16 նիստի

Առցանց նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 69-ը (վաթսունինը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին:

Նիստի օրակարգում ընդգրկված էր ԱԺ պատգամավոր Լ. Բաղայանի՝ ԱԺ ամբիոնից ունեցած ելույթի վերաբերյալ ԵՊՀ հայտարարության քննարկման մասին հարցը:

Մինչ օրակարգի հարցին անցնելը ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն անդրադարձավ ԿԳՄՄՆ-ի կողմից հաստատված եկամտային հարկի վերադարձի ձևով ուսման վարձավճարների փոխհատուցում նախատեսող մասնագիտությունների հարցին՝ նշելով, որ արդեն ստացել է հայազիտական մասնագիտությունների վերաբերյալ միջնորդություններ: Սակայն, ըստ նրա, ցանկալի չէ առանձին մասնագիտություններ առանձնացնել, այլ ավելի նպատակահարմար է միջնորդել բոլոր մասնագիտությունների համար, քանի որ դրանով սկզբունքորեն սոցիալական խնդիր է լուծվում: Գ. Գևորգյանն առաջարկեց համապատասխան նամակը ուղղել ոչ միայն վարչապետին, ԱԺ նախագահին և ԿԳՄՄ նախարարին, քանի որ, ըստ էության, օրենքում փոփոխություն և լրացում կատարելու նախաձեռնություն է արվում: Ըստ նրա՝ առանձին մասնագիտությունների շեշտումը վտանգավոր է, քանի որ շատ հաճախ փոխվում են դրանց անվանումները և ամեն անգամ փոփոխություն կատարելու համար օրենսդրին դիմելու անհրաժեշտություն է առաջանալու:

Անցնելով օրակարգային հարցի քննարկմանը՝ ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը հիմնականում նորմալ գնահատեց ԱԺ պատգամավոր Լ. Բաղայանի ելույթի վերաբերյալ հանձնաժողովի կողմից կազմված պատասխան հայտարարության տեքստի բովանդակությունը՝ նշելով որ հիմնականում համընկնում է իր կողմից ևս կազմված տեքստում առկա շեշտադրումներին և առաջարկեց որոշ ոճային բնույթի փոփոխություններ կատարել:

Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը հետաքրքրվեց, թե ընթացող քննարկմամբ ի՞նչ խնդիր է լուծում ԵՊՀ գիտական խորհուրդը: Անդրադառնալով պատգամավորի ելույթին՝ նա նշեց, որ ԱԺ աշխատանքային նիստի ընթացքում պատգամավորի կողմից արված ելույթում կա ընդամենը 3 հիմնական կետ: Ելույթի առաջին մտքի համար, ըստ նրա, պետք է պատգամավորին շնորհակալ լինել, քանի որ վերջինս իր դիտարկումներով դասախոսներին բաժանել է ինչ-որ խմբերի, որոնցից առաջինում այն դասախոսներն են, որոնք այս պայմաններում օրնիբուն ամեն ինչ արել են, որ ուսումնական գործընթացը նորմալ ընթանա: Ելույթում հնչեցված երկրորդ միտքը բացասական է, դուրեկան չէ, քանի որ չնշելով բուհի կամ դասախոսների անուններ, ասում է, որ նրանք մտնում են լսարան և դասի ժամին խոսում են այլ թեմաներից, ամբողջությամբ քննադատում գործող

իշխանություններին, կառավարության ղեկավարին: Երրորդ միտքը, ըստ Վ. Դումանյանի, այն էր, որ կան դասախոսներ, որոնք ինչ-որ գումարի դիմաց պայմաններ են դնում, որոշակի գումարով սեփական դասերն են անցկացնում և այլն: Պատգամավորի կողմից ասված նախադասություններից մեկում էլ ասում է «մաղել» բառը, որը հունիսի 25-ին կայացած գիտական խորհրդի նիստում գնահատվեց որպես անընդունելի ձևակերպում: Ըստ Վ. Դումանյանի ընկալման՝ պատգամավորը նշել է, որ եթե մարդն իր դասին զբաղվում է ոչ դասաժամային, այլ ուրիշ գործունեությամբ, ապա պետք է այդ մարդուն գիտելիք տալ, կամ այդ դասախոսը մտնի հունի մեջ, կամ մրցույթ հայտարարեն: Վ. Դումանյանը դատապարտելի, անընդունելի համարեց անհասցե, անանուն ելույթը՝ նշելով, որ անհասկանալի է որևէ անձի ելույթին գիտական խորհրդի ձևաչափով պատասխանելը: Ըստ նրա՝ գիտական խորհուրդն այն կառույցը չէ, որ ինչ-որ անձի ելույթին արձագանքի, դա կարող են անել անհատները: Նաև իր անհամաձայնությունն ու տարակուսանքը հայտնեց հանձնաժողովի կողմից պատգամավորի ելույթի առնչությամբ կազմված հայտարարության տեքստի որոշ դրույթների վերաբերյալ՝ դրանք համարելով որպես մանիպուլյացիա:

Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նկատեց որ, ԱԺ-ում հնչած ելույթը անանուն, անհասցե է, ինչը նշանակում է, որ այն վերաբերում է բոլորին՝ անհրաժեշտ համարելով գիտական խորհրդի կողմից պատասխան հայտարարության ընդունումը: Ըստ նրա՝ հանձնաժողովի կողմից կազմված հայտարարության տեքստը բավական հավասարակշռված է, ապաքաղաքական, և Համալսարանը մշտապես ձգտել և, որպես կանոն, հասել է իր նպատակին՝ ունենալու ազատ արտահայտվելու իրավունք: Գ. Ղազինյանը նոր առաջարկ ներկայացրեց, որ հայտարարությունը ընդունվի որպես հաղորդում հանցագործության մասին և պարզվի հնչեցված հայտարարությունների հիմնավորվածությունը՝ կողմերի համար դրանից բխող բոլոր իրավական հետևանքներով: Այսինքն, ըստ նրա, եթե հնչեցրած հայտարարությունների հիմնավորվածություն չլինի, ապա հայտարարություն անողը պետք է պատասխանատվության ենթարկվի սուտ մատնության համար:

Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը նշեց, որ պատգամավորի ելույթում արված «դասախոսներին մաղել» արտահայտությունը վիրավորական է, և ԵՊՀ-ն որպես կրթական ազգային օջախ պետք է հորդորի պատգամավորին դասախոսների և մանկավարժների հասցեին նման ձևակերպումներ թույլ չտալ: Մելքոնյանը, անդրադառնալով այլակարծությունը, ասաց, որ երբ կասկածի տակ է դրվում տեքստում հնչած այլակարծությունը, ապա պետք է նկատել հետևյալը. ֆիզիկայի կամ քիմիայի դասերի ժամանակ, երբ խոսվում է քաղաքական գործընթացներից, դա կարող է արհեստական համարվել, բայց երբ պատմության, իրավագիտության, քաղաքագիտության կամ այլ դասաժամերին զուգահեռներ են տարվում, ապա դա խիստ տրամաբանական է, այլ բան է, երբ դասախոսն իր անձնական դիրքորոշումը պարտադրում է ուսանողներին: Նա նաև նշեց, որ պատգամավոր Լ. Բադայանը մամուլում հայտարարություն է տարածել իր դեմ կազմակերպված գրոհի և հետապնդման մասին, որը, ըստ նրա, վերաբերում է իրեն, քանի որ ելույթի վերաբերյալ արտահայտվել են մի քանի հոգի, որոնցից

մեկն ինքն է եղել՝ կոչ անելով գիտական խորհրդին արձագանքել նաև պատգամավորի այդ հայտարարությանը:

Արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանը նշեց, որ ԱԺ-ում աշխատանքային քննարկում չի եղել, եղել է լիազումար նիստ, և ԱԺ պատգամավորը հանդես է եկել «Իմ քայլը» խմբակցության անունից, և ըստ այդմ՝ ելույթի նշանակությունը պետք չէ նսեմացնել, քանի որ թույլ է տրվել անընդունելի ձևակերպումներ: Ըստ նրա՝ ինչ վերաբերում է այն հարցին, թե գիտական խորհուրդը նման հարցի շուրջ պետք է հայտարարություն չընդունի՝ համարելով այն լոկալ հարց, որից այն մարդիկ են վիրավորվել, որոնք իրենց վրա են վերցրել, ընկալելի չէ: Գիտական խորհուրդը նախորդ նիստի ժամանակ որոշում էր ընդունել պատգամավորի ելույթի առնչությամբ հայտարարությամբ հանդես գալու մասին, և այն պետք է ընդունվի՝ հետագայում ԱԺ ամբիոնից նման ձևակերպումներ թույլ չտալու համար:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը նշեց, որ պատգամավորի ելույթում ոչ մի խոսք չկա ԵՊՀ-ի մասին, և գիտական խորհուրդը պետք է զերծ մնա որևէ մի անձի ելույթին արձագանքելուց՝ դա համարելով մանրունք: Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը ևս համակարծիք լինելով՝ նկատեց, որ հանձնաժողովի կողմից կազմված և քննարկման ներկայացված հայտարարության տեքստի նախագիծը որևէ կապ չունի պատգամավորի ելույթի հետ՝ դեմ արտահայտվելով հարցի քննարկմանն ու գիտական խորհրդի կողմից արձագանքելուն:

Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի տնօրեն Ե. Միրզոյանը առաջարկեց հայտարարության տեքստի նախագծում մի դրույթ ավելացնել և պահանջել պատգամավորից հրապարակել հստակ փաստեր ու տվյալներ: Գիտխորհրդի սովորող անդամ Տ. Սողոյանը նշեց, որ ելույթ ունեցողը ԱԺ պատգամավոր է, և չպետք է նսեմացվի այդ ելույթի նշանակությունը: Նրա խոսքով՝ նման մեղադրանքները պետք է լինեն հասցեական կամ անհասցե հայտարարությունը չվարկաբեկի դասախոսական հանրույթին՝ անհրաժեշտ համարելով ԵՊՀ գիտխորհրդի կողմից արձագանքը հայտարարության տեսքով: Գիտական խորհրդի սովորող անդամ Դ. Մաթևոսյանը ևս անհրաժեշտ համարեց կամ ռեկտորի անունից, կամ գիտական խորհրդի կողմից արձագանքը, տեքստի բովանդակային մասի քննարկումը՝ նշելով, որ պատգամավորը կոնկրետ փաստեր ունենալու դեպքում պետք է ներկայացնի իրավապահ մարմիններին, քանի որ անհասցե, մերկապարանոց հայտարարությունները որպես կանոն ընկալվում են որպես ճշմարտություն:

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Մարգարյանի համաձայն՝ չպետք է վարանել հստակ դիրքորոշում արտահայտելուց, պետք է ուշադրություն դարձնել հայտարարության տեքստին, որը պետք է զերծ լինի քաղաքական ենթատեքստից և չլինի «անատամ»: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը նշեց, որ պատգամավորի ելույթը վերաբերում էր ողջ բուհական համակարգի դասախոսներին, և ԵՊՀ-ն չի կարող անտարբեր լինել և անմասն մնալ պատասխան հայտարարությունից: Կազմված հայտարարության տեքստը ընդունելի համարելով՝ նա նկատեց, որ պատգամավորից պետք է պահանջել փաստերի բացահայտում և հասցեականություն: Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը խնդրահարույց համարեց

հայտարարության տեքստի պրակտիկ կողմը, որը ոչինչ չի տալու և հարց է, թե ինչ խնդիր է լուծելու: Արհեստակցական կազմակերպության նախագահ Ա. Ավետիսյանը նշեց, որ պատգամավորի ելույթը չպետք է թերագնահատել, հայտնել է տեսակետ, կարծիք, որը կհաում է իր քաղաքական թիմը՝ կրկին անհրաժեշտ համարելով հայտարարության ընդունումը, տեսակետի հայտնելը: Ռ. Մելքոնյանը ևս ընդգծեց, որ սա զուտ համալսարանական նախաձեռնություն է, որը քաղաքական որևէ ենթատեքստ չունի, իսկ հայտարարության ընդունումը պետք է որոշվի գիտխորհրդի քվեարկությամբ: ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը, դատապարտելի համարելով պատգամավորի ելույթի անհասցեականությունը, ճիշտ չհամարեց հարցի ներառումը գիտական խորհրդի օրակարգում: Նա առաջարկեց, որ ռեկտորն իր անունից որպես Համալսարանի դեկավար կարող է արձագանքել և վրդովմունք հայտնել, պահանջել հասցեականություն: Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան Էպո. Ժամկոչյանը հանձնաժողովի կողմից ներկայացված հայտարարության տեքստը համարեց հավասարակշռված՝ կարծիք հայտնելով, որ այն նաև ուսոցողական կլինի, որպեսզի բուհական հանրությանն ուղղված յուրաքանչյուր քննադատությունից առաջ մտորեն իրենց ձևակերպումների հարցում:

Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազիսյանը նկատեց, որ եթե ելույթը չլիներ անանուն, անհասցե, ոչ հրապարակային, այն կողջունվեր, սակայն հրապարակային, անհասցե խոսքն այլ նպատակ է հետապնդում, որին չարձագանքելը անհնար է: Չարձագանքելը բացասաբար կընկալվի հանրության շրջանում և կդիտվի որպես մեղավորության նշան: Ըստ նրա՝ եթե այդ ելույթին արձագանքելու նախաձեռնությունը լիներ ռեկտորի կողմից և համաձայներ իր ստորագրությամբ հանդես գար Համալսարանի անունից, դա ևս ընդունելի ու ողջունելի է: Ի պատասխան՝ ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ իր անունից հայտարարություն անելու նախաձեռնության դեպքում, դա կարվեր իր ձևակերպումներով, սակայն հարցը քննարկում է գիտական խորհուրդը: Անդրադառնալով հայտարարության տեքստի վերաբերյալ առաջարկներին և փոփոխություններին՝ Գ. Գևորգյանը ներկայացրեց որոշ առաջարկություններ ու խմբագրական բնույթի փոփոխություններ, որոնց վերաբերյալ գիտական խորհրդի համաձայնությունից հետո տեղի ունեցավ հայտարարության տեքստի ընդունման հարցով քվեարկությունը:

45 կողմ, 6 դեմ, 8 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ ԵՊՀ գիտական խորհուրդը քվեարկությամբ ընդունեց հանձնաժողովի կողմից ներկայացված հայտարարության տեքստը՝ առաջարկված խմբագրումներով ու փոփոխություններով:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

01.07.2020թ.